


№ 9 ՀՐԵՑԱՐԱՆԿՈՒԹՅՆ «ՊԵՏԱՑԱԼՕՑԵԻ» ԳՐԵՑԱՆ № 9 .

ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՕՎԵԱՆ

# ՍԱՐԵՐԻ ԾՈՅՈՒՄ

*Մանկական պատկեր*



891.995.

Ս-66

ԹԻՖԼԻՍ

պարան շխտիբանոս» նլիգաւեա. 17.

1913

Գրքի համար № 2011-071

№ 9 ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՊԵՏԱՏԱԼՈՑՑԻ» ԳՐԵՏԱՆ № 9

ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՈՎԵՆ

891.990

U-66 ԱՄ

ՄԱՐԵՐԻ ԾՈՑՈՒՄ

Մանկական պարտիզանական շտաբի



ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆՈՒՊԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՍՈՒՏ

ՏՈՒՐԱՆ ՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻ

18 ՆՈՅՄ. 1918 Բ, ԲԻՅՈՒՄ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Հասկրանս» Երևանում. 17.

1913

6259

891.990 Ներդրում  
U-66 | Առաջին հրատարակում

|           |         |  |  |
|-----------|---------|--|--|
| Ծա Կ-6169 | 13/1/28 |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |
|           |         |  |  |

6579  
1002

6250



## ՍԱՐԵՐԻ ԾՈՅՈՒՄ

### I.

Գրիգորն այս առաւօտ  
դարձեալ զնաց պղնձահանքի  
գործարանը: Ամառայ սկիզ-  
բնն էր, և պատանին, դուրս գալով  
բնակարանից, օգնում էր իւրը սա-  
րից իջնելուն:

—Գրիգոր, ձեռքդ տուր, այս  
տեղը շատ դիք է: Հանգարդ. ոտքս  
չի թողնում:

Աւ Գրիգորի հայրը կանգնեց, շփեց աջ ուս-  
քի ազդրը, շունչ քաշեց, յետոյ նորից շարու-  
նակեց ճանապարհը:

Գծաւոր, մաշւած սև բլուզը հագին քայ-  
լում էր Գրիգորի հայրը:

Մանր քարերն ու կողը փշրւում, գլորւում  
էին նրա ներքանի տակ, և ծերունին փո-

խում էր իր ոտքերը զգուշութեամբ և պահ-  
ւելով:

Շուրջ լեռների գագաթները հպարտօրէն  
ցցւում էին իրանց լերկ թիկունքներով, երբեմն  
ցանցառ անտառներով, երբեմն էլ դիք ուղ-  
ղութեամբ:

Սարի մի լանջում իշխում էին շախտային  
վառարանները\*), սրանց ծխից սևացած գա-  
գաթները բաւականին վեր էին բարձրացել:  
Այլ կողմում մի լեռ առանձնացած իր միայնա-  
կուժիւնն էր փայփայում, ինչպէս մեկուսա-  
ցած այրին ամուսնու մահից յետոյ:

Այդ բոլորը պղնձէ հանքն ու գործարանն էր:

— Գրիգոր, այնտեղից մարդիկ են գալիս,  
թէ աչքիս է երևում:

— Գրասենեակի ծառայողներն են:

Հօր ցոյց տւած ուղղութեամբ, գործարանի  
դիմաց, երկաթուղու կայարանից փուռում էր  
սարերի միջով մի նեղ արահետ, կածան: Սրա  
վրայ երևացին մի քանի ձիաւորներ: Ոլորա-  
պտոյտ ճանապարհը դժւարացնում էր կենդանի-  
ների վերելքը, և ձիերը շարունակ բարձրաց-  
նում, իջեցնում էին իրանց գլուխները: Վա-  
ղօրդեան արեգակի ճառագայթները իջնում էին

\*) Այդ վառարանների մէջ հալում են կարծր հանքերը:

սարերի վրայ և ոսկեգօծում նրանց գագաթները  
հմայիչ գոյնով:

Օդը թարմ էր ու դուրալի:

— Հայրիկ, ինձ որ վիճակի կրակախառը  
ձեռքս առնել, օրավարձս էլ կը բարձրանայ:

— Է՛հ, Գրիգոր, շախտի վառարանի կրա-  
կախառը քեզ շուտ չեն տայ: Ես էլ քո տարի-  
քին շատ էի նախանձում այս վառարանի շուրջ  
բանւորներին, բայց յետոյ նախապատուութիւն  
տւի շախտին, հանքահորին: Երկար, ծանր կրա-  
կախառը համարեա սաժէնից աւել է, զիտե՞ս  
ինչքան ուժասպառ է անում մարդու: Պիտի  
խառնես, հա՛, թէ չէ՛ մէկ էլ տեսար վառարանի  
բերանում կուտակեց հալոցքն ու սառեց:

— Ոչինչ, հայրիկ, իմ ուժը կը պատի: Ես  
կը դիմանամ կրակին:

Մի խոր շունչ քաշելով, հայրն ընդհատեց.

— Իսկ կրակի բոցը, որ վառարանի բերա-  
նից ժայթքում է, այնպէս ալաւ է տալիս, երեսդ  
այրում, որ մի քանի տարուց աչքիդ լոյսը  
փչացնում ես:

— Բայց ես շատ հաւանում եմ այն օձա-  
պտոյտ շիկացած հալոցքը, որ թափւում է վա-  
ռարանի բերանից: Ֆո՛ւ, հա՛, ֆո՛ւ, փշշ՛... Չէ,  
ես անպայման այդ մասը կընտրեմ. այստեղ գո-  
նէ լոյսի երես ես տեսնում, իսկ հանքահորերում

մարդ խլուրդ կը դառնայ: Անցեալները մտայ,  
տեսայ... Ո՛հ, ո՛հ, հայրիկ, դա մի մութ դժոխք  
է, որքան էլ երկար է նրա անցքը...

— Ծածկնր\*):

— Հն՛, այդ խաւար ու մութ շտօնը, գալիս  
էի, գալիս վերջ չը կար:

— Ինչ անես, մեր բախտն է: Այդ դեռ ու-  
չինչ. փորձանքն էլ աչքիդ առաջ ունեցիր: Այ,  
էս ոտքս շախտի հունարից չէ՞, որ հազիւ եմ  
շարժում: Կնց, քիչ հանգստանանք. իջնելն էլ  
մի տանջանք է, կամաց...

— Սուլոցից չուշանանք:

— Իեռ ժամանակ կայ. այսօր շուտ ենք  
դուրս եկել, այ, արեգակը այն գագաթից դեռ  
չի իջել:

Հայրը կանգնեց, շունչ քաշեց: Հևոցը կա-  
մաց-կամաց դատարեց: Նա նորից դիմեց որ-  
դուն:

— Այսօր դու վերջին հերթումն ես:

— Երէկ էի վերջին հերթում: Այսօր առա-  
ջին տեղումն եմ:

\*) Ծածկն—երկար նրբանցքն է, որ գնում է սարի միջով՝  
հորիզոնական ուղղութեամբ և ծառայում է հաղորդակցութեան ու  
հանքերը դուրս բերելու համար: Ծածկը գնում է դատարկ բա-  
ղաբլումբեան միջով: Սրան հակադիր ուղղութիւն ունի շախտը, որ  
հման է խորը հորերի և գնում է սարի վերևից, գագաթից, ուղղա-  
հայեաց գծով:

— Հն՛. ուրեմն լաւ է:

— Այսօր 70 վոյպէկ անպատճառ կը գայ\*):

Հայրը չը խօսեց աւել. նա շատ տխուր էր  
ու կտարւած: Անհանգիստ շարժումով նա յետ  
նայեց, յետոյ դանդաղ կերպով նորից շարժեց  
իր ոտքերը:

Նրանք մօտեցան գործարանի գրասենեա-  
կին: Հայրը վերցրեց հանքային լամպան\*\*): և  
ձօձելով աջ ձեռքում ուղևորւեց դէպի շտօնի  
մուտքը:

Տաշած քարերից էր մուտքը և այնքան

\*) Ամենաբարձր օրավարձը, որ կարող է աշխատել հանք  
ընտրող պատանին: Վարձատրութիւնը լինում է ընտրած հանքերի  
տոկոսների համեմատ: Ո՛վ շատ հարուստ բաղադրութիւնով հանք  
ընտրեց, նա աւել է ստանում: Ամենալաւ հանքի կտորներն ընկ-  
նում են մեքենայի բերանի մօտ, այդպէս ասած դազգեհանի մի  
ծայրում՝ գլխում, իսկ ամենաքիչ բաղադրութիւնով պատահում է  
միւս ծայրում՝ պոչում: Գլխից մինչև պոչը ընտրողների ձեռքից հան-  
քերն անցնելով հասկանալի է, որ վերջին տեղի համար մնում են  
աւելի անպէտք բաղադրութիւնով կտորներ: Այդպիսով դազգեհանի  
գլխում նստողը կաշխատէ դիցուք 70 կօպ., մինչդեռ պոչում նըս-  
տողը միևնոյն ժամանակ՝ 20 կ.: Այդ պատճառով ընտրողների մէջ  
տեղի վերաբերմամբ հերթապահութիւն է սահմանւած. սկսում է:  
մէկը դիցուք՝ գլխից, անցնում է պոչին նստած աղաների հերթով:

\*\*\*) Հանքերում օդը շատ անգամ պայթուցիկ գազերով է լի-  
նում լցւած, ուստի այնտեղ գործ են անում յատուկ լամպաներ:  
Բարակ, մաւտուլի ցանցով շրջապատւած է հանքային լամպան:  
Հանքի գազն ընկնելով և պայթելով լամպի մէջ՝ վտանգ չի սպառ-  
նում, որովհետև բոցը դիպչելով ցանցին իսկոյն ստոչում է և  
մարում:

ցած, որ մտնելուց կարիք էր զգացւում կռահալու:

Այստեղ սկսւում էր շտօնը, բանւորների մոյգ բլուզների ֆօնը գծագրւում էր հեռուից, ինչպէս զգգւած փսիաթ՝ մաշած էին նրանց գլխարկները, իսկ ձեռներում երկար լամպաները օրօրւում էին նման այն ճօճանին, որ անխնամ թողած է լինում քամու առաջ: Երբեմն երբեմն լսում էին բացագանչութիւններ: Ամեն օր աշխատանքի ժամանակամիջոցին, երբ բանւորների մի խումբը փոխարինում է միւսին, այստեղ ժողովում են աշխատաւորները և ըստ պատու իրանց հերթին:

Ահա երկար շարանը. բանւորները իջեցրին գլուխները և պատրաստեցին ուղևորել դէպի մուտքը: Գրիգորի հայրն էլ վառեց իր լամպայի պատրոյգը և աջ ձեռքն առաջ մեկնելով մտաւ շտօնը, չը նկատելով անգամ, թէ ինչպէս պատրոյգը քամու հոսանքից պսպղաց և ճենճերային անախորժ հոտ տարածեց:

## II.

Գրիգորը կորցրեց հօրը իր աչքից: Նա գրնաց մի այլ կողմ. այստեղ հաւաքւած էին նրա ընկերները, մօտ 50 հոգի, բոլորն էլ պատանիներ՝ 12-ից մինչև 15 տարեկան:

Շախտի սեւցած վառարանները, ինչպէս մի-մի բարձր ցանձնացած խորհրդաւոր բուրգեր, նայում էին նրան:

Գրիգորը իր աչքերը վերև բարձրացրեց և սկսեց դիտել այս հրաշալիքները:

— Հա՛, դու էլ եկա՛ր:

Գրիգորը մինչև անգամ նեղացաւ, որ իր ընկերը խանգարեց նրա մտածմունքները:

— Սամսոն, դու ես:

— Ի՞նչ զարմանալի տներ են:

— Ո՞ւր է տներ, դրանք վառարաններ են:

— Վառարաններ. չեմ տեսնում:

— Ի՞նչ է նշանակում նոր ես: Հա՛, դա գիւղը չէ, իմացիր:

— Բայց որ չեմ տեսնում վառարաններ, — նկատեց Սամսոնը:

— Ի՞նչպէս չես տեսնում. այ քթիդ տակ:

Սամսոնը քիթը բռնեց և քորեց:

— Այստեղ է, երեսիդ վրայ մի որոնիր:

— Ո՞րը. սա՛:

— Հա՛, հէնց սա:

— Դա ինչ որ տուն է:

Հա՛, հէնց էս ինչ որ տունը:

— Մեր գիւղի եկեղեցուց էլ դա բարձր է սև...

Գրիգորն այլ ևս չէր լսում գիւղացի ընկերոջը: Շախտային վառարանները մի-մի հրաշալիք

էին նրան թւում: Այդ հրաշալիքները փայլում էին նրա աչքում մի շատ ցանկալի ու գրաւիչ հմայքով: Վառարանները նրա առաջ կարծես աւելի ու աւելի մեծանում էին: Սհա մէկի գագաթը իր լայնեզր երախով կորչում է այնտեղ երկու սաժէնանոց բարձրութեան մէջ, յետոյ նորից երևում են սեացած կոկորդով և նայում նրան, կարծես այդ միջոցին պատրաստւում էին կլանելու Գրիգորին, երբեմն էլ միախառնելով՝ բոլորը արձանի տեսք էին ընդունում: Մի կողմում սեացած էր կեղտից ու մըրից վառարանի սանդուղը, նրա վերին աստիճանը, կենտրոնի աստիճանները, և ստորոտի առաջին աստիճանները... Այդ բոլորը նրա մէջ մի ցանկութիւն է առաջ բերում՝ աշխատել այստեղ, այդ վառարանների ծոցում:

Նա ձգտում է, այն, նա շատ է ուզում... Դա մեռած գործ չէ: Նա ուզում է բոլոր սրբտով խորասուզել այդ մեծ գործի մէջ, մասնակից լինել նրա կեանքին, իր մասն ունենալ այս աշխատանքի մէջ. օ, այս անշունչ կարծր քարերը փափկանում ու հեղուկ են կտրւում այդ վառարանի լայն ու առողջ ստամոքսի մէջ, կերպարանափոխւում են շիկացած հալոցքի: Թող միւս ընկերները ընտրեն հանքի կտորները, աւելի խամբը աշխատեն այդ դագգեահի առաջ. այդ

աշխատանքն արդէն նրա համար չէ: Բայց ի՞նչ պէս անէ, նրան այժմ չեն տայ, նրա «տարիքը դեռ թոյլ չի տալիս: Բայց ոչինչ, նա շուտով, շուտով կը հասնէ և այդ օրւան: Գոնէ արժանանայ կրակախառնին: Օ, նա անպայման կը հասնէ: Եւ ի՞նչ երջանիկ օր կը լինի այս օրը: Նա կը բացէ



վառարանի բերանը, ինքը կը քանդէ ծեփը, կրակախառը կը խրէ վառարանի փոքրիկ բերանը, կը տանէ կոկորդը, ներսը, և նրա ձեռքի տակից Փշշալով օձապտոյտ կը հոսէ շիկացած, եռուն հալոցքը, կը թափւէ աւազանի մէջ, այն խորը աւազանի մէջ, որ գտնւում է վառարանի

բերանի մօտ: Տէր Ասուած... նա բաց կը թողնէ շաքը\*), մետաղի խարամը. շաքը և շուրը կը Ֆշֆշան... Ինչպէս կը նախանձեն ընկերները. նա ցոյց կը տայ իր հունարը: Աւագային կաղապարները կը լցնէ ինքը, ոչ թէ մի անգամ... Կանցնէ երկու ժամ, նա նորից կը բացէ վառարանի բերանը, յետոյ էլի կը ծեփէ, էլի կը բացէ...

Եւ այդ մտածմունքների տպաւորութեան ազդեցութեան տակ Գրիգորն իրան զգաց թեթեւացած: Մտածմունքները տեղի տւին պատկերացումների: Նրան թւաց, որ նորից լցրին վառարանը հանքերով, նորից պսպլաց բացառութիւնը և թափւելով խորքը սկսեց Փշշալ, արձակելով մի կրծու ծծմբային հոտ: Ծծմբի հոտն այնպէս տիրել է շուրջը, որ անսովոր մարդը բռնում է քիթը, ծանրանում է նրա թոքերի գործառնութիւնը. բայց Գրիգորը սովոր է. նա տանում է այդ խանձրահոտը... Եւ նորից պատրաստում է հալոցքը, մոխրագոյն կոյտերը փոխում են շիկացած հեղուկի, կատարում է կերպարանափոխութիւնը:

Գրիգորը մեքենաբար շարժեց ձեռքերը և ամբողջապէս տարւեց այդ գործով, նա նորից

\*) Շաք—այն անպէտք մասը, փրփուրը, որ կայ հանքի մէջ և բաժանում է հալելուց, ինչպէս կերակուրի քափը: Շաքը անպէտք բաղադրութիւն է. նրան թափում են ջրի հետ խառնելով:

բևեռեց աչքերը վառարանների գազաթներին և նրա նիհար, դալուկ երեսի վրայով սահեց մի ուրախագին ժպիտ:

—Անպայման, անպայման... շախտան չեմ գնայ...

Բայց ահա աչքը նա գցեց մի այլ տեղ: Չախ կողմի սարի փէշերով առաջին վերելքն էին կատարում փոքրիկ վագօնները և բերում կօկս, վառելիք, գործարանի վառարանների համար: Վագօնները բարձրանում էին գրգռալով, ինչպէս մի մեծ բզէզ. բարձրանում էին, բարձրանում, տնքում ու փշշում... Այդ միջոցին մի սուր սուլոց սթափեցրեց Գրիգորին:

Գործարանային կեանքը սկսեց: Մըջիւնների նման ամեն մէկը իր գործին կպաւ: Երբեմն ուժեղ, երբեմն հատ-հատ հարւածներ էին տալիս քարահանքերին, տաղտկալի, բայց յամառ թափով մեծ-մեծ մուրճերն իջնում էին և մանրում հանքերը: Շունչ առաւ և շախտան: Նա ժայթքում էր իր բերնից բաղադրութիւնը... Վերելակ մեքենան հանում, դուրս էր բերում հանքերը, յետոյ նոյն մեքենան դատարկ իջնում էր սարի սիրտը, խորքը, իջնում դէպի հարստութեան խորհրդապահելի շերտերը: Այստեղ երկար նա չի մնում, կրկին դուրս է գալիս դէպի գազաթը մի անտարբեր սառնութեամբ թա-



փուլում հանքը... Այդպէս շախտայի և գործարանի  
 իւրաքանչիւր անկիւնում արտադրում էին, պատ-  
 րաստում էին, շնչում էին... և այդպէս օրեր,  
 շաբաթներ և շատ տարիներ...

### III.

Գրիգորն արդէն իր բաժնունմն է:

Երկար թախտանման դազգեանը ձգւում էր  
 այստեղ: Նրա վրայի քաշած բերեզէնտ-քա-  
 թանը երկու ծայրից պատուում է գլանների  
 վրայով: Այդ դազգեանի վրայ մի ծայրից թափ-  
 ւում են մանրացրած ու շարգած հանքի կը-  
 տորները:

Մէկ-մէկու հրելով, ուժեղ ոստիւնով պա-  
 տանիները անցան դազգեանի շուրջը:

—Ձգոյ՛ջ, զգոյ՛ջ,—լսեց մի պատուէր նրանց  
 ետեից:

Եւ հսկիչը սկսեց պատել պատանիների  
 շուրջը: Ձեռքում բռնած մտրակը բարձրացնե-  
 լով մի քանի անգամ նա խիստ սպառնաց մա-  
 նուկներին: Երեխաներն այդ հսկիչին չէին սի-  
 րում, նայում էին նրան՝ իբրև մի շար ոգու,  
 զրի իւրաքանչիւր ակնարկը նրանց համար ատե-  
 լի է, ամեն մի սպառնալիքը պատուհաս: Բոպէա-  
 կան ազմուկը դադարեց իսկոյն, և բոլոր պա-  
 տանիների ձեռները անցան գործի:

Հանքի կտորները թափւում ու կուտակւում  
 էին դազգեանի ամբողջ տարածութեան վրայ,  
 գլորում, փախչում պատանիների ձեռքի տա-  
 կից և նրանց շահափրութիւնը վառում:

Գրիգորը նայեց առաջին տեղին մի ինք-  
 նաբաւական գոհունակութեամբ, պատանեկա-  
 կան մաքուր հայեացքով և ուրախ ժպտով: Եւ  
 նրա առաջ այսօր պատկերացաւ յաջող ընտրու-  
 թիւնը: Այսօր նա մի բոպէ ձեռները չի ծախ և  
 անպայման ամենից շատ կընտրէ, մանաւանդ  
 իր մրցակից Սանդրոյից: Այդ Սանդրոն այնքան  
 վարժ աչք ու ձեռք ունի, որ նրա մօտ նստած  
 օրը հեշտութեամբ լինում է յետ ընկնել: Սանդր-  
 ռոն մի կտոր հանք չի բաց թողնում, շարունակ  
 կօլջեղաններ\*): դատարկ քարեր շարտում է իր  
 հերթակալների առաջ: Այսօր նա հայրիկին  
 կը միխիթարի իր ջանքով: Սակայն երբ հերթն ե-  
 կաւ նստելու, նա յոսզւեց: Գրիգորը նկատեց  
 բոլոր ընկերների նախանձը, իսկ իր մօտ նրա-  
 տածները նոյն իսկ խոժոռ հայեացք գցեցին  
 նրա վրայ:

—Ի՞նչ այսօր ոչինչ չես կարող ընտրել,—  
 վէս-հանաքով, վէս-լրջութեամբ ասաց կողքի

\*) Կօլջեղանի մէջ պղինձ կամ բոլորովին չի լինում և կամ  
 լինում է այնքան սակաւ, որ չեն գործադրում:

նստած ընկերը և ձեռքով մի թեթև զարկ տաւ Գրիգորի թիկունքին:

Գրիգորը, ի հարկէ, հանաքի տեղ ընդունեց ընկերոջ նկատողութիւնները և ոչինչ չասաց:

Նա շարունակեց իր գործը:

Դա այն աշխատանքն էր, որ թոյլ էր տրուում պղնձէ գործարաններում երեխաներին անելու: Այստեղ շարժում էին ձեռները գրգռուում ջղերը, կենտրոնացնում ուշադրութիւնը: Այստեղի բաժինն էր կեղտ, փոշի, թրջած հանքեր, թար ու թափ...

— Ի՞նչ ես անում, — յանկարծ գոչեց Գրիգորը, դառնալով իր հարեանին, — դա իմ կտորն է, կ'աց, դեռ քո կողմը չի ընկել:

— Ի՞նչ է. հէնց լաւ կտոր եկաւ, ուզում ես տէր դառնաս, ասում ես քոնն է:


— Անհամութիւն ես անում, — նկատեց մի յոյն ընկեր, — դու միշտ պիտի կուես: Այդ կտորը ի՞նչ էր:

Պատանիների մէջ անցաւ մի թեթև իրարանցում: Գրիգորին պաշտպանողը խօսեց մի խուպոտ ձայնով.

— Միշտ կպչում ես, — ասաց նա, — երէկ էլ ինձ հրեցիր, ինչ է՝ որ ձեռքիս տակից անցնէ լաւ հանքը:

— Խփիր գլխին, — մէջ ընկաւ մի ուրիշը:

— Փորձիր տեսնեմ, — խոժոռեց տուժող ընկերը, — տեսնենք քանի գլուխ ունես...



1009  
6579  
2001

Բայց յանկարծ սրանց խօսքն ընդհատուեց մի ուժեղ և խրոխտ ձայնից. — Էլի սկսեցի՞ք...



եւ հսկիչը, ուղղելով իր փափախը՝ մօտեցաւ բռնեց մէկի ականջից, ուրրեց նրան, յետոյ բարձրացրեց բռունցքը մի ուրիշի վրին...

Երեխաները մի ըսպէ լռեցին, մէկ-մէկ հսկիչի վրայ երկիւղալի հայեացք դրեցին և լուս կացան:

— Մա ըո կտորը չէ, — քիչ լուսթիւնից յետոյ ցոյց տւաւ նախկին խօսողը, մի լաւ կտոր մօտեցնելով տուժողի քթին, — ձեռքդ դէնը քաշիր... Ինչպէս պատրաստ է ուրիշի կտորը ծըփելու:

Ընկերները կուշտ ծիծաղեցին:

— Տեսէք, տեսէք, ինչ հրաշալի կտոր է: Այստեղ անպատճառ 15<sup>0</sup>/<sub>10</sub> պղինձ կայ\*), — շարունակում էր գրգռել Գրիգորին պաշտպանող ընկերը:

— Այ, էլի... ի, ինչ լաւն է. գնա, բարի ճանապարհ...

Եւ նա զցեց կտորը իր արկղի մէջ: Նա այնպէս ձևացրեց, թէ իբր իրան շարունակ յաշող կտորներ են ընկնում, և իր կձու հայեացքը նետեց դժգոհ ընկերոջ երեսին:

— Ես այսօր աշխատեցի 60 կօպէկ, պակաս

\*) Հանքի շարժած կտորներէ մէջ պղնձէ բաղադրութեանը զանազան է լինում, շափում է 0<sup>0</sup>/<sub>10</sub> ներուի: Ամենաքիչը լինում է 20<sup>0</sup>/<sub>10</sub>, իսկ ամենաբարձրը մինչև 16<sup>0</sup>/<sub>10</sub>:

չէ... Տես, տես, էլի կտոր, բա էլի... հոռու...

— Մուստաֆան, երէկ քո բախտն էր գալի, այսօր իմը:

— Թող լինի, — ասաց թուրք ընկեր Մուստաֆան, — անք չունենա: Բայց շատ կը խօսես, ես ուրախ կը լինեմ... մի հէքիաթ անես... Այ, բե՛րանդ բացիր, կտորն ինձ եկաւ և ինչ հրաշալի կտոր: Բռնէ, բռնէ, այ, այս քոնն է՝ տես ինչ փառաւոր կօշնդան է:

— Գլխիդ կաշի... ըհը...

Եւ ընկերը վերցրեց դատարկ բաղադրութեանը հանաքով զցեց Մուստաֆայի արկղը:

Լսեց նորից հսկիչի սպաննական ձայնը, այս անգամ աւելի հրամայական աւելի ուժեղ: Հսկիչն, ուղղեց ամբողջ հասակով, կարծես պատրաստուելիս լինէր յարձակելու որտի վրայ: Այս անգամ խրատեց նա Մուստաֆային, բարձրացրեց մտրակը և մի ուժգին հարեած հանցրեց պատանու մէջքին: Կատարելով իր պարտքը՝ հսկիչը հարաւ և յաղթական քայլերով արկեց գտաւել աշխատանքը պատանիներէ շուրջը:

— Չե՛ղ քոլորիդ պիտի ջարդես, սպաննու՛ւմ էր նա: — Չե՛մ արել, որ չը կռէք:

Գտնանիներն այս անգամ չուրով ջը պիտի անցին՝ հսկիչի անսպանձ բարդութիւնից, ինչ Մուստաֆան երկար ժամանակ չը կարողացաւ



անցնել գործի: Նրա մէջքն այրուում էր. մտրակի զարկից:

Այդ ժամանակն էր, որ Գրիգորը վեր կացաւ, վերցրեց իր լցրած մօտ երկու պուզանոց արկղը, դրեց մէջքին և ծանր քայլերով գնաց դատարկելու հանքի կտորները ընդհանուր արկղի մէջ:

Գրիգորը շարունակում էր իր գործը: Նա շարժում էր ձեռները, հեռու պահում իրան վէճերից, հաւասարապէս արագ թափով լցնում արկղը: Շապկի թևերը նրան նեղացրին, և նա վեր քաշեց պատառոտուն կտորը:

Ահա նա կրկին լցրեց կողքի ցինկեայ արկղը: Քամին փչում էր նրա գլխի վրայով, թափանցում նրա կիսամերկ մարմնի մէջ: Այսօր քամին ուժեղ հարւածներ ունի, բայց Գրիգորն ուրախ է և ժպտադէմ:

Հէյ, հէյ, հէյ... ընկնում են քարակոյտերը ցինկեայ արկղի մէջ:

Դարձեալ նրա երեսի վրայ խաղաց ուրախ ժպիտը, և նա ձեռքով դէպի դիմացի ընկերը աֆսոսաբար շարժում արաւ, կարծես դրանով ուզում էր ասել, որ «քեզնից յետ չեմ մնայ»... Նրա դիմաց նստած էր ճարպիկ Սանդրօն: Նա լցրել էր իր արկղը երկու անգամ, մաքրել, լցնում էր երրորդ անգամը, իսկ ինքը դեռ երկրորդ չի լցրել:

— Ձէ, Սանդրօն ինձնից առաջ ընկաւ:

Բայց ահա բնիտի բերմամբ նրա առաջ նոր կտորներ թափւեցին: Գրիգորը լցրեց երրորդ արկղը, լցրեց չորրորդը, հինգերորդը և Սանդրօն յետ թողեց:

Եւ Գրիգորը այդպէս երկար բանեց:

Երբեմն նա արագ թափով մէկ-մէկի ետեւից գցում է հանքի կտորները արկղի մէջ, երբեմն նստած տեղից բարձրանում և իր մօտ կուտակում քարերը, երբեմն յուզւելով դէն է շարժում մի կտոր անպէտք կօլչեղան, բարկանալով թէ ինչու պղնձից զուրկ այդ կտորը ընկաւ իր ձեռքը, խլեց նրա ժամանակը, մինչդեռ այդ ընդմէջն նա կարող էր իր արկղը նետել աւելի լաւ կտորներ:

Բայց յուզմունքը իսկոյն նստում էր, երբ մի նոր լաւ կտոր էր գալիս, և նա կրկին աւելի նոր եռանդով խորասուզւում էր գործի մէջ: Այդ ժամանակ նա չէր նկատում ոչ իր դրացուն, ոչ դիմացի ճարպիկ Սանդրօնի:

Գրիգորն ուզում է շատ աշխատել, ընկերներից անց ընկնել, և ահա թէ ինչու նրա ջրածկանունքները աւելի շարժուն թափ էին առնում երբեմն: Դէպի ընկերները ատելութեամբ նա չէր վառւած: Եթէ ուզում էր աւել աշխատել, նրա համար՝ որ նրա տունն էլ խիստ կա-

ըիքի մէջ էր, իսկ այդ աշխատանքի թափից կախած է նրա օրավարձը: Նա յիշեց այժմ էլ, որ փոքրիկ երկու քոյրերը վեց ամիս է ինչ օտաբաց են վազվզում, շորներն էլ պատառուտուն է, մայրն էլ միշտ վշտանում է գրանց այդպէս տեսնելով. երբեմն նրանք հաց էլ չեն ունենում... Անցեալ շաբաթ նրանք բոլորը պառկեցին քնելու առանց մի կտոր հաց բերանները զնելու...

## IV

Վերջալոյսի կարմրագոյն շողքերը շատ կարճատև եղան: Հորիզոնի վրայ գրկախառնւեցին կապարագոյն շերտեր: Այստեղ, սարերում, շատ յաճախ է երկինքը ծածկում մառախլապատ ամպերով:

Թափւեց մի յորդ անձրև, յետոյ, կարկուտ: Թացութիւնը և խոնաւութիւնը շրջապատեց պատանիներին. ցրտից նրանք սկսեցին դողալ. իսկ անձրևի հարւածները մոխրագոյն քողի նման պատել էին շուրջ լեռները: Հարւածում էր և կարկուտը, սառցի կոյտերը մոնչում էին, երբեմն զարնում և ձայն հանում՝ ձիուսմբակների առփիւնի նման, երբեմն հեռում խուլ գղրղիւն արձակում, և այդ ժամանակ քամու ուժեղ հար-

ւածը ջրի հոսանքը կատաղաբար բերում էր ու շարտում պատանիների շալաշի կտրին. կաթիլները փշրում էին այնտեղ, մանրանում, թափւում ցած, թրջում մանուկներին: Իսկ սարի գագաթները... օ, սրանք ճիւղի նման սկեռել են իրանց գլուխները: Բայց յանկարծ մէկ էլ տեսնես հարւածները մեղմանում էին, հատ-հատ ծառերի գագաթները այլևս չէին սկանում, ուրախ հարսի նման նայում էին հպարտութեամբ և ինքնաբաւականութեամբ: Յետոյ անձրևը բարակում էր, որպէսզի նոր թափ ստանայ: Յաջորդ բոպէին ջրի հարւածները անհամեմատ աւելի ուժեղանում, աւելի անխնայ էին մոնչում: Անձրևի կաթիլները հարւածում էին Գրիգորի մէջքին, թրջում նրա բարակ շապիկը, բոբիկ ոտները: Եւ Գրիգորի ձեռները գգացին ինչոր յոգնածութիւն:

Նա մըսում է:

Շալաշը պատսպարում է միայն վերևից, իսկ չորս կողմը բաց է քամու և անձրևի առաջ:

Գրիգորը տխրեց և նեղացաւ: Նա չէր կարողանում արագութեամբ շարժել ձեռները և արկղը նախկին յաջորդականութեամբ լցնել:

Այդպէս անցնում էին երեկոյեան ժամերը յոգնած մտածմունքների մէջ: Մի քանի բոպէով նա թողեց աշխատելը, վեր կացաւ, շարժում

գործեց, մէջքով կանգնեց դագճեանին և սկսեց գիտել անձրևը:

Փոթորիկը սաստկանում էր: Սարերի լանջին թիկն ընկած բանւորների տնակները կորամէջք պառաւի նման կուշ էին եկել անձրևի առաջ և սևացել: Գործարանի խանութը, անկիւնում, ճիշտ է, այնքան էլ չէր ճնշւել, բայց և այնպէս խոժոռել էր իր դիմագծերը՝ նման սարի գագաթին դադար առած թրջւած արձւին:

Փայլեց կայծակը, շողքն ընկաւ Գրիգորի աչքերին. պատանին մի րոպէ սեղմեց աչքի կոպերը:

Այդպէս նա մնում էր լուռ: Վրայ էր եկել ինչ-որ ծուլութիւն՝ օրւայ շարունակ գործելուց, աշխատելուց:

Յանկարծ նա սթափւեց, տեսաւ, որ իր դիմացի ընկերը դատարկեց լցրած արկղը. հանքերը թափւեցին ընդհանուր արկղի մէջ ուժգին հարւածներով և կարծես մի դառն ծիծաղ ու քրքիջ արձակելով:

Անձրևը բաւականին բարակեց: Այժմ լսում են հատ-հատ հարւածներ: Որոտմունքը կալարւում է, բայց հեռւում և այն էլ խուլ կերպով: Երկինքը կամաց-կամաց բացում է իր երեսը: Փայլակը մի անգամ էլ իր շողքերը զցեց, բայց ոչ ուժգին, այլ թոյլ կերպով. որտան էլ թուլա-

ցաւ. նա նվանում է այժմ սլացող գնդակի շրււոցին կամ հեռացող սայլի անիւնների ձայներին:

Բայց ահա արեգակի ոսկեգոյն ճառագայթները ճեղքեցին ամպերը. և ներկեցին սարերի գագաթները. վերջին անգամ մի մեղմ փայլանցաւ հորիզոնի միջով: Նրան հետևեց մի խուլ որոտ, և օրը բացւեց: Գրիգորը այժմ օթափւեց և նոր նկատեց, որ ձեռները ծալել է պարապ, մինչդեռ ընկերները բանում են: Նա ժօտեցաւ նորից կոյտերին, փորձեց վերցնել կտորները: Կտորները կարծես փախչում էին նրա մատների տակից, նրանք սառն էին և թաց...

Գրիգորը խորին լրջութեամբ կուտակում էր հանքի կտորները, ինքն իրան հարցնում՝ «ինչ՞աւ է այդպէս սառը»:

— Գրիգոր, դու յոգնել ես, շատ աշխատեցիր, շատ արագ շարժեցիր ձեռներդ, հանքերը թաց էին հէնց սկզբից:

— Բայց ինչպէս արագ չը գործէի, երբ հարկաւոր էր արկղները լցնել, և որքան շատ՝ այնքան լաւ:

Բայց հանքի կտորները այդպիսի քնքշութիւններ չէին ընդունում:

— Ի՞նչ նրա համար ես, Գրիգոր, որ շարժես ձեռներդ:

Եւ Գրիգորի սիրտն աւելի լցւեց: Չափազանց ծանր աշխատանքը զցեց նրան այն դրութեան մէջ, որ Գրիգորը այլևս չը կարողացաւ սրտով կաշել գործին:

Հանքի կտորները կորցրին իրանց հմայքը: Միշտ, ամեն օր այդ բաց շալաշում, յաճախ քամու, անձրևի տակ ընտրիւր, հա՛ ընտրիւր այդ հանքերը, ջուկիւր, հա՛ ջուկիւր...

Նա ուզում է վազել այն սարի գլուխը. այժմ անձրևից յետոյ սրբան ժպտուն տեսք է ընդունել. նա ուզում է բարձրանալ ծայրը, գագաթը, քաղել վայրի ծաղիկներ, խաղալ այն իշուկի հետ, որ արածում է սարի ստորոտում...

—Ո՛չ, ո՛չ, դու պիտի բանես:

Բայց անա նրա ուշադրութիւնն ընկաւ աջ կողմի սարի վրայ:

Իրա տակն էին այն 17 յարկ մէկ-մէկի վրայ յենւած հանքահորերը, որտեղ բանում է նրա հայրը:

—Ի՞նչ է անում նա...

Գրիգորը գոնէ շնչում է այժմ թարմ օդը, իսկ խեղճ հայրիկը այդ մութ, խոնաւ շախտում այդ հաճոյքից էլ զրկւած է:

Եւ նա յիշեց, թէ ինչպէս մի օր գնաց այդ նկուղը տեսնելու:

Ի՞նչ սարսափելի պատկեր. մութ, խօլ խաւար... Մշքդ շարունակ պահում ես լամպի պըսպլուն շողքին. լոյսը քիչ թեքւեց առաջիցդ...



—Կաց, կաց,— ձայն է տալիս Գրիգորը առջևից գնացողին, —արագ ես գնում. լոյսը չեմ տեսնում.

Եւ նրա ոտքը գիպաւ ուխտերին. Գրի-

գորը շեղւեց՝ չը գիտէ ինչի համար են այդ ուել-  
սերը: «Զգոյշ, ձախ բռնէք», — լսեց մի ձայն:  
Մէկ էլ տեսնես ձիու գլուխ... Գրիգորը սար-  
սուկեց: Սեղծ կենդանին վազօնով քաշում էր հանքը  
ուելսերի վրայով: Ահա թէ ինչպէս են բերում  
նրանց համար հանքերը, — մտածեց Գրիգորը:  
Բայց այդ միջոցին նա ընկաւ ցեխի, ջրի մէջ,  
ուտքերը թաց եղան: Յետ քաշուեց, գլուխը դի-  
պաւ փայտեայ յենարաններին: Նա գիտէ, որ  
այդ յենարանները, գերանները, թիկն են տա-  
լիս վերի յարկին, որպէսզի չը վիւ հողի շերտը:  
Այդ գիտէ Գրիգորը: Մի անգամ հայրը յարմա-  
րեցնում էր այդ գերանները, մէկը ընկաւ ու-  
սին... Օ՛, որքան տնքաց հայրը. մի ամբողջ օր  
պառկեց...

«Զգոյշ, աջ բռնէք»... Դարձեալ մի վազօն,  
դարձեալ ձիու գլուխ... Գրիգորը կուշ է գալիս  
պատի տակ: Այժմ նա վախենում է լուրջ  
կերպով:

«Զգոյշ էլեքտրական թելերից», — պատ-  
ւիրեց ուղեկցող լապտերով բանուորը: Հանքա-  
հորը այնպէս էր ճնշել, որ չէր թողնում անգամ  
նրան յետ ու առաջ գնալ: Ճիշտ է, այժմ, նրա  
աչքերը կարծես վարժուեցին, բայց վախը բաց չի  
թողնում նրան: Եթէ յանկարծ փուլ գայ այդ  
հողային օձօտքը, Գրիգորը հէնց աչտակ

կրմնայ տեղն ու տեղը: Կարող է դինամիտից  
հրդեհ առաջանալ... Մակայն մթուփիւնը կրտ-  
րում էր նրա առաջը: Ինչ-որ դաժան ձեռներ,  
կարծես, ուզում էին գրկել նրան. սրանք սպառ-  
նում էին իրանց լուծեամբ և խորհրդաւորու-  
թեամբ: Կեռ գծեր, թեք ուղղութիւններ... Ահա  
ինչ-որ փոս՝ խոր, դաժան, սևեռուն երախով...  
Շախտան խորին ակնածութեամբ պահում է իբ-  
ծոցում պղինձը: Դրա ետևից են ընկած այդ  
բանուորները, այդ նկուղն է տալիս նրանց օրա-  
պահիկը: Եւ այդ ժամանակ ամբողջ արարածու-  
թիւնը կորցնում էր իր ահուկի գոյնը, վաանգը...

Բանթողի սուր սուլոցը կտրեց Գրիգորի  
մտածմունքների թելը:

Ընկերները շարժուեցին. Գրիգորն էլ ոտքե-  
րը ուղղեց նրանց ետևից:

Բայց հազիւ նա մի քանի քայլ առաւ, մի  
խուլ աղմուկ կանգնեցրեց նրան:

Նա լսում էր ընդհատ-ընդհատ ձայներ, եր-  
բեմն պատւիրող, երբեմն հրամայող:

Եւ Գրիգորի սիրտը դող ընկաւ:

Գործարանի բժիշկն էր տալիս այդ հատ ու  
կտոր պատուէրները: Բայց ահա նա սրեց ականջ-  
ները և արագացրեց քայլերը:

Նրա առաջ աղմուկը սաստկանում էր, ձայ-



ները գալիս էին շախտայի մուտքից: Մի քանի-  
 օր շտապ վաղում էին դէպի գրասենեակը և  
 անյայտանում, յետոյ էլի վերադառնում, աւելի  
 խմբում: Գուրս էին գալիս շտախից նոր բան-  
 ւորներ, հանգցնում էին իրանց լամպանե-  
 րը և միանում խմբին:

Գրիգորն իսկոյն մօտեցաւ, եկան և նրա  
 ընկերները:

«Օհ, հօ, ուՖ...» — տնքում էր մէկը: Եւ այն  
 րոպէին, երբ այդ տնքոցները ճեղքում էին օդը,  
 իրարանցումը սաստկանում էր, շարժողութիւն-  
 ներն արագանում էին:

Մի ընկճած, խիստ կոտրւած ձայնով բա-  
 ցազանչեց Գրիգորը:

— Աստուծ, դա հայրիկի տնքոցն է:

Նա մտաւ բանւորների մէջ, ճեղքեց նրանց  
 շարքը:

Տնքոցը սաստկանում էր:


Եւ Գրիգորը տեսաւ:

Մէջ տեղում, գետնի վրայ ձգւած էր նրա  
 հայրը, ձեռքը արիւնդւայ: Ձեռքի թաթը պոկ էր  
 եկած և կախ ընկած մի կտոր մսից:

Հօր մարած աչքերը խորն էին ընկել, գոյնը  
 զցել. ծերունին չէր շարժւում և ամբողջապէս  
 մեռածի էր նմանում:

— Հայրիկ, հայրիկ...

— Թողէք, Թողէք, — խօսեցին բանւորները:  
 Բժիշկը կուսցած բռնել էր նրա հօր շարք-



ւած ձեռքը և վիրակապով փաթաթում էր: Հօր  
 ձեռքից արիւն էր հոսում և ներկում գետինը:  
 Երբեմն-երբեմն վիրաւորւածը տնքում էր ու  
 խուլ շունչ քաշում:

— Հեռու, հեռու, օղի առաջը մի կտրէք,  
— կարգադրում էր բժիշկը:

Բանւորները յետ քաշւեցին:

Գրիգորը քարացել էր: Նա նոր գլխի ընկաւ հարցնելու, թէ ինչ է պատահել:

— Անգգուշութիւն, — ասաց բանւորներից մինը. — հանքը գցում էինք վերելակ մեքենայի վրայ, չը գիտեմ ինչպէս եղաւ, որ ձեռքը թողեց շղթայի տակ... Հազիւ կանգնեցրինք մեքենան, թէ չէ...

Գրիգորը այլևս ոչինչ չը լսեց. նա շարունակ լալիս էր:

— Հայրիկ, հայրիկ, օհ, օհ, օհ, օհ:

Մի ցնցիչ դող անցաւ նրա մարմնով:

— Մի լար, — ասաց մի ծերունի բանւոր, — կը բժշկեն:

— Բայց, հայրիկ, այն էլ աջ ձեռքը... Ի՞նչպէս կը բանես... օհ, օհ, օհ...

— Դեռ փառք. անցեալ տարի մեր ընկերներից մէկի գլխին գերանը չընկաւ... Խեղճը մի ժամ միայն ապրեց: Շախտա է. փորձանքը աչքիդ առաջ միշտ պիտի ունենաս:

— Բա ջրից որ խեղդւեց Սամսօնը, չես ասում, — խօսեց մի ուրիշ բանւոր: — Հանքի ձեղքից մի այնպիսի յորդութեամբ յանկարծ ջուր հո-

սեց, որ քիչ էր մնում բոլորս տեղն ու տեղը մնայինք: Գրիգորը գլուխը կորացած շարունակ հեկեկում էր:

— Հայրիկը վերջին օրերը շատ մաշւած էր ու յոգնած, — խօսում էր մի երրորդը, — չը պիտի գար բանելու: Այսօր էր երևի յոգնած է եղել, հաւասարակշռութիւնը կորցրել է:

— Բայց ինչո՞ւ են հայրիկին քաշքշում, շարձարում...

— Պէտք է վերքը կապեմ թէ չէ, — խօսեց բժիշկը: — Վերցրէք:

Չորս բանւոր վերցրին Գրիգորի հօրը, դրին պատգարակի վրայ:

— Տարէք տուն, մի ժամից ես կը գամ, — պատուիրեց բժիշկը:

Բանւորները շարժւեցին: Բոլորի երեսի վրայ խոր թախիժ էր նկատւում:

Յանկարծ Գրիգորը ճշաց և հեկեկաց մի սրտակոտոր ձայնով.

— Հայրիկ, հայրիկ, ախ, հայրիկ...

## VI

Նորից շառագունում է երկինքը, նորից արթնանում է օրը հանքահորերում:

Երէկւայ մղձաւանջը այսօր յետ է մղւում, երկինքը բացւում է, նոր գոյներ են գծագրւում հորիզոնի վրայ, և այդ գոյներն ոչ մի նմանութիւն չունեն երեք ամիս առաջ տիրող Գրիգորի տան արև ու վաշերի, յուսահատական ճիչերի հետ: Վրայ հասաւ նոր հունձ, իսկ նար հունձը տւաւ նոր ծիլեր:

Այժմ դարձեալ դուրս է գալիս Գրիգորը տանից, իջնում է սարերից, գնում է աշխատելու...

Մենակ է գնում, բայց նրա ոտքերը չեն կանգ առնում: Նոր մտախոհութիւնը, ընտանիքի ծանր հոգսերը ընկնում են միայն նրա վրայ, բայց Գրիգորը չի տխրում:

Մի ժամանակ, հօր տկարութեան օրերում, Գրիգորը կարծես կորցնում էր հաւատը, իր տան գլխին եկած փորձանքը նրան վշտացնում էր. քիչ բան չէ, նրա սիրելի հայրը կորցրել է աշխատելու ընդունակութիւնը. բանն այնտեղ հասաւ, որ գործարանի տէրերը մեղադրեցին հէնց հօրը, ասացին, որ անզգուշ է եղել... Գրիգորի հայրը դիմել է դատի... Ի՞նչ կասէ դատը, դեռ Գրիգորը չը գիտէ. բայց ի՞նչ էլ նա ասէ, պէտք է իշխել ընկճող հոգու վրայ... Այդ գիտէ Գրիգորը: —Պէտք է պատուով տանել ամեն մի փորձանք և պատահարներ:

Այդ էին ասում Գրիգորի բանւոր-ընկերները և ամեն անգամ խրախուսում: Նրանք նոյն իսկ թեթև նիւթական օգնութիւն հասցրին Գրիգորի ընտանիքին իրանց միջոցներից:

Եւ Գրիգորը կարողացաւ դուրս գալ ընկճած դրութիւնից:

Կեանքն եռում է, մարդիկ գործում են, աշխատում են, կուռում են, ընկնում են: Գրիգորը փորձով գիտէ, որ այդ պատահարները նոր փորձառութիւն են բերում մարդու համար, և նա նոր եռանդ ստացաւ, նոր թափով կպաւ աշխատանքին:

—Աշխատիր, որդեակ, — ասում էր հայրը:—

բանւորի վիճակը հարուստ է այդպիսի պատուհասներով, \* վտանգալից հիւանդութիւններով, բայց քո բուռն ջանքը, սերտ կերպով ներքելը քո վիճակին՝ դուրս կը բերէ ընտանիքիդ անդամներին դէպի փրկութեան ճանապարհը:

MB

Եւ հօր ձայնի մէջ հնչում էր հաւատ և խոր հաւատ. դէպի ապագան:

—Դու մեծ գործի վրայ ես, մի մոռանար այդ... Մենք պէտք է հաւատանք... բանւորը չի կարող կորցնել իր հաւատը: Եթէ մենք ինքներս չուզենք օգնել մեր թշուառութեան, այն ժամանակ ի՞նչ կը լինի...

—Այո, հայրիկ, նոյնը մեր ընկերներն են ասում: Դու եղիր հանգիստ և մի վշտանար... Իմ բազուկները չեն կանգնի արդար աշխատանքի առաջ...

—Գնա, գնա, որդեակ, չուշանաս, — ընդհատեց հայրը:

Եւ հօր աչքերի մէջ վառեցին ուրախութեան կրակներ:

Յանկարծ հօր առողջ ձեռքն ընկաւ որդու ուսերի վրայ, և ծերունին բարձրացաւ նստած տեղից:

—Սպասիր, որդեակ, — ասաց հայրը սիրալիր և սովորական ձայնով, — ես գալիս եմ...

—Մը:

—Քեզ ճանապարհ գցեմ դէպի ճշմարիտ, արդար վաստակը...

W

Եւ նա շարժեց: Վիրաւորւած աջ ձեռքը անշարժ ընկած էր կողքից: Հայրը կարողանում էր բարձրացնել այդ կուռը, բայց այդ ժամա-

Ծակ նրա ձեռքը մի ճնշիչ տպաւորութիւն էր գործում: Դաստակը չը կար, կռան արմատը չորացած. կաշու կնճիռները վկայում էին, թէ որքան տանջանք կարող է պատճառել հօրը աջ ձեռքի անգործունէութիւնը...

— Պէտք է ապրել, որդեակս, պէտք է կրուել շարիքների գէմ. իսկ դրա համար կարևոր է, որ մենք պահենք մեր թասիբը: Եւ այդ ոյժը պէտք է ունենանք սարի ծոցում աշխատողներս...

Հօր խօսքերի տպաւորութեան տակ Գրիգորի սրտի թափն ուժեղացաւ, ոտքերն աւելի հաստատուն հարւածներ տւին քարակոյտերին, իսկ երեսի վրայ երևացին կարմիր գօյեր:

— Դու գնա, հայրիկ, կը յոգնես...

Եւ Գրիգորն օգնեց հօրը շուռ գալու, յետոյ մէկ ոտքը դրեց սարի վրայ ցցւած մի քարի, վրայից մի ոտախն գործեց և գնդակի նման իջաւ բարձրութիւնից:

Հայրը երկար նայեց որդու ետևից. նրա կոր մէջքը շտկւեց, գլուխը վեր բարձրացաւ. նա չէր հեռացնում աչքերը շրջակայքից...

Իսկ այնտեղ, սարերի ծոցում, եռում է կեանքը... վազում են կօկսով բարձած վազօնները, շանաչում են գլորւող հանքերը, վշշում են կաթսաները... ահա բերին, թափեցին շաքր... իջնում է նորից դատարկ վազօնը. վառարանի ծուխը նոր թանձրացած քուլաներով բարձրանում է վեր:

Զարթուել էր նոր շարժիչը, ահա նորից... Եկե՛ք հարիւր տարի շարժումներ...



## «ՊԵՍՏԱԼՈՑԿԻ»

## ԳՐԱՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- |  |       |
|--|-------|
| 1. Մեթոդական ժողովածու թուարանական խնդիրների Ա. Տ. 4-րդ դպ.        | 25 կ. |
| 2. Նոյն Բ. տարի, 4-րդ դպ.  | 25 »  |
| 3. Նոյն. Գ. տարի, 2-րդ դպ.   | 25 »  |
| 4. Գ. Հայկունի—Դերձակ Աղուէսը՝ գունատիպ պատկերներով մանկական պատմ. | 25 »  |
| 5. Նոյն—Աբլարի Դատը  | 20 »  |
| 6. Նոյն—Չղճիկը   | 05 »  |
| 7. Խ. Սամուէլեան—Հայ սովորութեան իրաւունքը.                        | 50 »  |
| 8. Տէր-Գրիգորեան—Հենրիխ Պեստալցցի կենսագրութիւնը                   | 30 »  |
| 9. Յ. Սոլովեան—Սարերի ծոցում, մանկական պատկեր.                     | 15 »  |

Դիմել՝ Тифлисъ, Магазинъ Т-ва „Песталоцци“. Михайловскій пр. № 101.